

ՔԵՆՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑՈՒ

Գ.

Մեր հակառակորդի կարծիքով Կաղանկատուացին դրել է Վիրոյի եւ Ջեւանչէրի հատուածները, ասանք գրուադները, որպէս ակա- նատես 628 եւ 689 թուին: Քննենք նախ Վիրոյի գրուազը:

Տեսանք որ Վիրոյի պատմութիւնը գրուած է ամէն պարադային 652 թուականից յետոյ եւ ոչ 628ին: Բայց մոռանանք այս կէտը, ինչպէս մոռացել է շ. Հացունի: Ուրիշ կողմէն մօտե- նանք հարցին:

Նման զէպքերում լաւագոյն միջոցն է պատ- մական ստուգումը, այսինքն թէ ո՞րքան ճշմարիտ է քննելի պատմութիւնը. կարելի՞ է վստա- չիլ որ պատմին իրօք ականատես ոմն է, թէ այնպիսի սխալներ է գործում, այնպիսի շփոթ տեղեկութիւններ է տալիս որ մատնում են նրա ոչ ժամանակակից լինելու պարագան:

Արդ Վիրոյի գրուազը բռնում է Բ գրքի Թ քն մինչեւ ԺԶ (ոչ ԺԳ ինչպէս շ. Հացունին է հաշում) գլուխը: Թ գլուխը ներս- ծակաւ է, մի տեսակ նախաքան: Հետուեալ ժ գլխում պատմում են Սոսրով Բ. Ապ- րուէկի շահատակութիւնները եւ ի միջի սյ- րոց հետեւեալը..

«Այլ առաւել ևս ոգորէր ընդ ծով եւ ընդ ցա- մաք եւ զպեղեցկաչն քաղաքս Հոռոմաբնոցոց ընակչօքն իւրովք հանդերձ խաղաղացուցանէր ի կողմանս Պարսից վասն տենչամաց իւրոց. նմա- նապէս հարտարօք ի նոյն ձև օրինակի նստու- ցանկեւ եւ անուանել զոմն առաւել քան զԱնտիոք քաղաք եւ զայն ամենայն իյւր անուն զսոս- րեմ ի վերայ յաւելեալք»:

Այստեղ մի խոչոր անաբրոնիս կայ: Գիտենք Սերէոսից եւ այլուստ որ Սոսրով Ա. Անուշը- ուան բիզանդական հողից զաղթեցրեց ժողո- վուրդը եւ հիմնեց մի նոր քաղաք եւ կոչեց Վեհ- Անջատոք, այսինքն Վեհ-ազ-Անտաք, չլաւ քան Անտիոք»:

Մեր պատմագրի Առաւել քան զԱնտիոք քաղա- քը նոյնն է ինչ որ Վեհ-Անջատոք: Իսկ վերջինս հիմնուած է 540 թուականին: Պատմադիրը շփո- թել է Սոսրով Ա. Սոսրով Բ.ի հետ եւ առա- ջինի գործը վերագրել երկրորդին: Ակնեւել է որ այսպիսի շփոթութեան հեղինակը չէր կա- րող ժամանակակից լինել Սոսրով Բ. Ապրուէ- գին եւ ոչ ամառանդ գրել 628ին: Եփոթու- թիւնը կարելի է եւ պէտք է մեկնել նրանով որ հեղինակը, ընդհակառակն, շատ ուշ է քան 628 թիւը: Վ ժԱ գլխում նկարագրում է Սա- գարաց արչաւանքը չյամին երեսներորդի ու- թեբորդի, որ ամ էր տաքանայի աղետի սպան- ման, Սոսրովուս, այսինքն 628 թուին, Յիրա- կանին այս արչաւանքը տեղի է ունեցել 626 թուին: 628ին գրող հեղինակը այսպիսի սխալ չէր կարող գործել և երկու տարի հտութիւն ունեցող անցքը տեղափոխել իր գրութեան տա- րին: Հետեւաբար նա 628ի գրել չէ:

ԺԲ գլխի մէջ մի ուրիշ տեղ կրպիտ սխալ: «Յամին երեսներորդի վեցերորդի Սոսրովուս», ուրեմն 626ին, Հերակլ կայսր խորհում է «թէ զիարդ արդեօք կարասցէ բուժիլ յանհնարին տրամութեան եւ ի նախատանացն», եւ յարա- բերութեան մէջ է մտնում Սոսրոբոնրի հետ ևւ նրանց կանչում օգնութեամբ: Կատարեալ անհեթեթութիւն է, 626ին սրբել տալ 668ին

կրած նախատինքը: Հեղինակը լաւ չէ սերտել իր ձեռքի տակ գտնուած նիւթերը: Խաղարկներէ արշաւանքը տեղի ունեցաւ 626ին, իսկ 628ին վերադարձ արշաւանքը իսկապէս մի ուրիշ նկարագրութիւնն է նոյն 626ի արշաւանքի: Մի դէպքը վերածելով երկուսի, հեղինակը դործել է ախարայից մի ուրիշ սխալ՝ կարծելով որ 626 թուին Խաղարկները «ճանապարհ կալելալ ընչ աշխարհն Վրաց եւ Եղիպտացոց հաստին անցին ընդ ծովն մեծ մինչեւ ի պայտսն արքունի եւ յանդիման լեալ մեծի կայսերն, հաստատեն աս միմեանս զերդունս»:

Սակայն Խաղարկները երբեք չեն գնացել բիւզանդական մայրաքաղաք բանակցելու կարգուսեր հետ. Հերակլ կայսրն է որ եկաւ Երևոյւցոց աշխարհը եւ պաշարեց Տիփղիսը: Այս քաղաքի տնօրէն տեղի ունեցաւ տեսակցութիւն խաղարկ Քալաուորի՝ Ջերու խաբանի հետ, որ է Զիւրէլի Թէոփան պատմիչի: Կայսրը խոստանում էր տալ իր մատուցած հարկ 17 տարեկան զուտարը, ի արիւտուր զինուորակալն օրհնութեան, խաղարկ իշխանին: Եթէ մեր պատմագիրը դրած լինէր 628 թուին, պէտք է որ այսքան սխալ տեղեկութիւն չունենար արտան եղելութեան մասին, մանաւանդ որ Խաղարկները իջնելով ձորայ կամ Ձողայ պահակեց Այրուանք, այստեղից էլ ին զնացել Տիփղիս ներկայանալու կայսրը:

Աւելորդ չէ յիշել նաեւ որ ներածական զլիտում (Թ) դործ է ածուած հայ թուակնանութիւնը որ մեր մատենագրութեան մէջ ստաջին անգամ երբեան է գալիս 684 թ. եւ սոյնտական է դառնում միմիայն ութերորդ դարու վերջերից յետոյ: 1):

1) Հնագոյն արձանագրութիւնն է Թալիմի մայր եկեղեցւ ԱՄԹ Թ. 2. = 783: Արիւտուր մարդտիտի կարն արձանագրութիւնն Աիի շրինցի գեկեղեցիս գայս ի թուակնանութեան ՀԱ. > վիճելի. արդեօք հայրոց պիտի կարդայ թէ 71=622. մի դէպքում արձանագրութիւնը պէտք է թերի հաւարել, միւս դէպքում խնդրուած է մնում թէ ինչու չէ նշանակած (հայրց) ՀԱ: Մատենագիրներից առաջին անգամ Ղեւոնդի մօտ, Արծրունի երայրների մատասակոյրեանս

Այս դիտողութիւններն ինքնին սպառոյց են որ մեր պատմագիրը ժամանակակից չէ անցքերին եւ ամէն պարագայի Վերոյի դրուար չէր կարող գրուած լինել 628 թուին, հակասակ Հ. Հացունու:

Պատուական հօր մորտութեան արբերն է երկրորդ զբէթ Թ ներածական զլիտ սխալ ըմբռնումը: Գլխի վերնագիրն է. «Պատմութիւն յաղապս յարուցման արդաց բարբարոսաց եւ պէտպէս տեղեկեանքն տալնապին որ եղև աշխարհաց»: Սա ընդհանուր վերնագիր է որ վերաբերում է հետեւեալ զլուխներին մինչեւ ԺԳ, թէև սրանցից իրաքանչիւրն իր յատուկ վերնագիրն եւս ունի, ինչպէս որ ԺԴ զլիտ վերնագիրն ամփոփում է ոչ միայն ԺԴ, այլ եւ հետեւեալ զլուխները մինչև ԺՁ, հակասակ որ իրենց յատուկ վերնագիրն ունին: Թ զլիտ վերնագիրը վերաբերում է իսկապէս Թ մինչև ԺՁ զլուխների այս երկու հատուկներին: Ճիշդ այդպէս Բ զբէթ Թ զլիտ վերնագիրն ի նկատի ունի Թ թէ մինչև ԼԳ զլուխները, որովհետեւ այնտեղ նշանակուած է «զլուտ արբոյ Խաչին որ ի Գիւն», իսկ այդ զլիտ մասին խօսում է ԼԳ զլիտում:

Հակասակ վերնագիրն, Թ զլուտ տալնապին մասին չէ խօսում, այլ մի տեսակ ներածութիւն է: Նախ քան անցնել տալնապին պատմութեան, մեր պատմագիրը անձնատուր է լինում տիտուր խորհրդածութեան եւ զուում է՝ «Մ՛վ սքանչելի պատմութեանս, զոր հանդերձեալ եմ հնչեցուցանել ի լսելիս տիեզերաց մօտաւորաց եւ հեռաւորաց»: Եւ շարեւակում է արծարծել այս նիւթը: Նրան թում է որ տեղեկական պատմութիւնը չզիտէ նման տալնապ որ վիճարկեց Աղուանից աշխարհին, ո՛չ սուրբ զիբբը, ո՛չ արտաքին պատմագիրները: Կարծես թէ Փրկչի մարգարէութիւնն էր որ կարտուեց թէ «լսելոց էք պատերազմունս եւ համբաւս պատերազմաց եւ լինել սոյնոց յաճախութիւնս

տարին ԱԼԳ=784 (աւելի ճիշդ ԱՄԿ): ԱՆԵԲ կարծում ենք որ «Կայսերաց Պատմութիւն» վերջ յիշատակած ձԼԴ=685, հնագոյն գոյրածութիւնն է:

և սուրբ եւ սասանութիւնք» 1): Յանկարծ սթափուում է իր անբջանքից: «Եւ արդ քանպի ընկղմեցան միտք իմ եւ զգաղեցան խորհուրդդ իմ ի տեղեբազան հարուածոցս եւ մուսցայ զկարգ բանին որ հանդերձեալն էր արկանել հիմն եւ սկիզբն առնել ժամանակաց եւ անցից որք անցին ընդ աշխարհս Աղուանոր, ըստ բրանի մարդարէին եթէ՛ «մոռացայ ուտել զհաց իմ ի ձայնէ հեծութեան իմոյ» 1): սակայն եւ այժմ առ անդամ մի թողեալ զահ եւ զերկիւզ որ դեռ գմեզս (կարգա՛ զվիտս) 2) ունի, ի նոյն կարգն դարձցուք»:

Արդ շ. Հացունի արնպէս է հասկացել այս տողերը որպէս թէ հեղինակն ականատես է եղել տաղնապին, կրել բոլոր ծանրութիւնն ու նեղութիւնը եւ սկսել զրել իր պատմական գործը սկզբից եւեթ, զրել «արդ նեղութեան մէջ իսկ, ոչ թէ կանխաւ»:

Եթէ հեղինակի միտքն այդ լինէր, պէտք էր սպասել որ արդ մասին խօսէր իր ձեռնարկութեան սկզբին եւ ոչ թէ միջին: Յետոյ, շ. Հացունի անտեսել է «մուսցայ զկարգ բանին» կարեւոր խօսքերը որ բոլորովին այլ իմաստ են տալիս ամբողջ պարբերութեան: Պատմագրերը զրել, հասցրել է իր գործը մինչեւ Բ զրբի Ը զլուիւր եւ պիտի անցնէ «տեղեբարձո՞մ տաղնապի» պատմութեան հետեւեալ Թ զըրխից: Սակայն փոխանակ անմիջապէս նիւթին անցնելու, հեղինակի միտքը տարուում է, ընկնում միւստ մտածումներէր մէջ թէ ի՞նչ ասաւոր, չտեսնուած ու չլսուած, պատմութիւն է որ պիտի անէ. «միտքը կլնւում է, խոհերը շփոթւում» այս սոսկալի անցքերից եւ հարուած ներից, ո՛չ որպէս ականատես այլ իբրեւ պատմող, ռւտի եւ պահ մի ժողանում է «զկարգ բանին», այսինքն շեղում է նիւթից: Սակայն որքան եւ ընկճուած ծանր մտքերից պէտք է սթափուել եւ «ի նոյն կարգ գառնայ», այսինքն

շարունակել պատմութեան թելը որ ընդհատած էր իր խորհրդածութեան հետեւեալով:

Եւ խոստանում է պատմել ոչ միայն թշնամիներէ հարուածները, այլ եւ նրանց պարտութիւնը, թէ ինչպէս «մարդասէր այն Աստուծոյ» յաղթեց եւ թշնամիներ ճանկան տապաստ առաջիկա շաց մերոց:

Յաջորդ Ժ զլիւից սկսած մինչեւ ԺԶ, մեր պատմագիրը նկարագրում է տաղնապալից շրջան թագարների արշաւանքի պատճառով եւ վերջին գլխում պատմում է թշնամու պարտութիւնը, թէ ինչպէս հրաշքով թշնամին իր պատիժը կրեց: Ջերմ խաբանը սպանուեց իւրայիններէց այն միջոցին երբ նրա որդին, Չորպան-Թարխան արւանաբու զորավարի օժանդակութեամբ, ասպատակում էր Աղուանք: Թաքանը, դեռ չսպանուած, ընտանեկան դժտութիւնները ծագելուն մէջ, յետ կանչեց իր որդեակ եւ զորավարին:

Այս առթիւ մեր հեղինակը նորէն ընկնում է խորհրդածութեան մէջ. «Եւ յուզին միտք իմ դրազում ճտոք անել օրինակս. միթէ՞ տառուկ իցես քան զընկղմին Փարաւոնի» եւ կամ Ամաղեկի պարտութիւնը, Գէղէտնի եւ Յեսուկ յաջողութիւնները եւ կամ Պարտասանցիներին հասած պատիժը: Փոքրիկ շեղումից յետոյ վերսկսում է իր պատմութիւնը, ասելով՝ «այլ մեք ի նոյն դարձուք ի կարգ բանիցն, եւ աւարտում դրուագը արձանագրելով արժայորդու եւ իր զորավարի քաշուիլը Աղուանքից համաձայն խաբանից ստացած պատուէրին: Հեղինակի «մտքի յուզումը» այստեղ նոյն կարգի արտայայտութիւն է ինչ որ Նախարանի մէջ «մտքի ընկղմումը», եւ շին նշանակում թէ պատմագիրն ականատես է տաղնապին եւ զրել է տաղնապի մէջ իսկ, «ոչ թէ կանխաւ», 62Ն թուին: Նախարանի ակնարկը «անկան տապաստ առաջի շաց մերոց» վերաբերում է խաբանի անսպասելի վախճանին, որ տեղի ունեցաւ մեր հեղինակի հաշուով Կաւտոի թաղաւորութիւնից երկու տարի յետոյ (յերկրորդ ամի Արտաշէի, ԺԶ գլ.), 629-630ին: Ուրեմն, եթէ Հացունի, պէս մտածեմք, պատմագիրը պէտք է որ սկսած լինի իր գործը ամէն պարագային ոչ 62Նի տաղնապի մէջ, այլ առնուազն

1) Մատթ. ԻԻ., 2:
 1) Սաղմ. ՃԱ., Զ.:

2) Այս սրբագրութիւնը պատկանում է Պարոնեան վարդապետին, իր ձեռագրով նշանակած Կաղանկատաւացու իր օրինակի յուսանցքում:

երկու տարուց յետոյ, երբ զահ եւ երկիւղ»
անցել էին: Հեղինակի զպատճ զահ եւ երկիւ-
ղը՝ զրողի զպատճ է եւ ոչ տազնապէս իրապէս
ապրողի սարսուռ:

Ա զրքի մէջ ժԱ զԼ բերուած է Գիւտ
եպիսկոպոսի նամակը Վաչէի: Անվաւեր զբը-
ուածք է, բաւականին անճաշակ: Գիւտ ուզում
է նկարագրել Վաչէ թապաւորի առաքինութիւ-
նը, բայց ստսկում է այդ մտքից. «Ահ անցաւ
ինձ, գոչում է նա, մեծ եւ հաւազին եւ բարձ-
րագոյն քան զերկիւս երկնից... եւ խորամուխ
լինիլ երկնչիմ եթէ զուցէ ընկղմիցիմ որպէս
Պետրոս Առաքեալ ի ծով անդեղալին»... վեր-
ջապէս յաղթահարում է ահն ու երկիւղ. «Արդ
ահա յորմէ երկուցեալ էի ի ձեռս սիրոյ մօ-
տիմ... եւ սկսանիմ ուտար արժան է սկսանից»: Ստորեւ
բացատրում է. «Այս է որ զահի հար-
եալ էի ի սկզբանէ պատմութեանս որ վեր քան
զբան զսանից»:

Ապաիսի զբուրեան մէջ է զգում եւ մեր
պատմագիրը, երբ պատրաստում է զբերլ ոչ
թէ մի առաքինի կեանք, այլ «տիեզերական
տազնապէս: Ակում է յուզմունքով եւ վեր-
ջացնում նոյն զգացումով, որպէս պատմիչ,
կրկնում ենք, եւ ոչ ակնանտես:

Ներածական Թ զԼիի մէջ պատմագիրը
խոստանում է զբերլ մեծ «տազնապէս», բայց
հարկաւոր է համարում սկսել նախընթաց անց-
քերից, ասելով. «Եւ զի անցեալ ժամանակն
յետո կոյս զիրն պահանջէ ի մէնջ պատմել,
սկսայց յառաջին տասնեւութ նահանջէն յայտ-
նութեան տեսնն մերոյ Յիսուսի Քրիստոսի մե-
հեկանի ամսոյ, յերեսուն եւ հինգ ամէն իրա-
րովու Որմզդեան արքայից արքայի որ եղեւ»:

Ոտորովի 35րդ տարին է (590+35 =)
625, որին համաձայն է եւ միւս թուականը, 18
նահանջ՝ հաշուած Մեհեկան ամսի Յայնու-
թիւնից: Հայ թուականը սկսում է 552 թ. երբ
Նաւասարդի մէկը = 11 յուլիսի, եւ հետեւաբար
Մեհեկանի 1 = 556 յունուարի: Այս է Յայտ-
նութեան Մեհեկանը որից հաշուելով 18 նահանջ
(4×18=) 72 տարի կը ստացուի (553+72)
625 թ.:

Պատմագիրն ուրեմն պիտի սկսէ իր պատ-

մութիւնը 625 թուից: Յաջորդ ժ զԼիի վերնա-
գիրը՝ «Յառաջին տասնեւութ նահանջէն սկիզբն
պատմողաբար» հաստատում է նոյն խոստումը՝
սկսել յառաջին (ամէ) յետ 72 տարուոյ, ուրեմն
625ից յետոյ:

Սակայն, հակառակ խոստման, պատմա-
գիրը սկսում է ոչ թէ 625ից, այլ 614 թուից,
յիշատակում է Երուսաղէմի արումը եւ խաչա-
փայտի զերութիւնը որ տեղի ունեցան 614
թուին, Հերակի կայսրի առաջին արշաւանքը
622 թուին, յարձակումը Ատրպատականի վեր-
բայ եւ յառաջանալը մինչեւ Գայջ արան քաղա-
քը, Պարսից թագաւորներէի ամարանոցը (1).
Ատրպատական մտաւ կայսրը, ըստ Թէոփանի,
20 ապրիլի 623 թուին (2) եւ այնտեղից վերա-
դարձաւ ձմերբու Ազուանք: Կաղանկատուացին
յիշում է որ Պարսից զօրավար Շահբապաղա-
կան եկաւ Հերակի զէմ: Թէոփանի ասելով,
Սարաբգական զօրավարը որ նոյն Շահբապա-
ղականն է (եւ ոչ Շահբապաղական, ինչպէս
ուզուած է), յիբաւի, եկաւ Հերակի զէմ զար-
նան 624 թուին: Մեր պատմագիրը գիտէ որ
«միւս զօրավար» եկաւ «ի Հլոմայց», այսինքն
Հլոմոց երկրից: Այս զօրավարը իրականն էր
որ կոչուած էր նաեւ Շահբապաղ եւ Ռազմիողան:
Հետեւեալ ժԱ զԼ պատմագիրն անցնում է

1) Տպագիրն ունի Գայջաւան: Պետք է գտն
գրել Գայջ արան: Պարսից արքաների ամարա-
նոց Ատրպատականի Գանձակ բազմն էր, որ
բնաւ Ռաւրիզ չէ, այլ այժմեան Թախտ-ի-Սիւ-
լէյման: Արաբները կոչում են Շիզ, եւ վկա-
յում են որ հին ձեւն է Ջիս, որ իբրեւ թէ Գաղ-
նա (= Գանձակ) արաբական արտասանութիւն
է: Մեզ քում է որ Գայջ նոյնն է այս Ջիսի
հետ, որի պարսկական ձեւը պետք է ինքը Գէս.
Գայս: Այստեղ էր գտնուում Ատրվնասպ հուչա-
կաւոր հրատը որ համարուում էր պատերազմա-
կան հովանաւոր եւ թագաւորները ուխտ էին
զպիս եւ յազոզութիւն խնդրում պատերազմ
զնախ:

2) Theophanes, Chronographia, ed.
Bonn, p. 474.

Ոսպարաց արչաւին 628 թուին: Ոսորով լսելով որ Ոսպարները ասպատակում են երկիրը Հե-րակի դրզմամբ, մարդ է զրկում յանդիմանե-լու: Եթէ նրանց ոսկի էր պէտք, ինքն աւելի մեծ նուէրներ կարող էր տալ քան ստացել են կայսրից եւ սպասնաց յետ կանչել իր քաջա-մարտիկ զորավարներին, Շահր-Վարազ, Շահէն եւ Քրտարական (1) որ աւերում են կայսերա-կան հողերը եւ նրանց ուղղել Ոսպարների դէմ: Ոսպարները իջնել Աղուանք, ըստ Քչո-փանի, յարձակուեցին Ատրպատականի վերայ, եւ վերադարձին զնացին պաշարելու Տփղիս քաղաքը: Կայսրը եկաւ զօրքով օգնութեան: Ամէն միջոց գործ դրին քաղաքի դէմ, բայց չկարողացան գրաւել: Եկաւ Շահր-Վարազ եւ պաշարողները ստիպուած հեռացան:

Հերակլ առաջարկեց Ջերու խաքանին վերադառնալ իր տեղը, քանի որ լեռնականները սո-վոր չեն նարաւային չոգերի, եւ զալ հետեւեալ տարին աւելի հովասուն եղանակի:

Տփղիսի բնակիչները սկսեցին ծաղրել Հո-նաց (Ոսպարաց) թագաւորին, ցուցարարելով պարտասկներ վերայ նրա ծաղրանկարը՝ զժած մի մեծ դղումի վերայ: Անարգեցին նաեւ զգմիս թագաւորն», այսինքն Հերակլին, անուանելով նրան «պիղծ եւ արուազեղծ» (2):

Այս բոլորը ճշմարտա է ընդհանուր առ-մամբ, սխալ է միայն տարեթիւր: Տեսարանը տեղի ունեցաւ 626ին եւ ոչ 628: Փրչէ վրիպակ չէ, որովհետեւ ասուած է՝ «որ ամ էր տագնա-պի աղետի սպանման Ոսորովու»: Ոսորով

սպանուեց 628 փետրուարի 24:

Պատմագիրը ծրագրել էր պատմել 625ի յաջողած անցքերը: Ժ եւ ԺԱ դուրիները չեղում են ծրագրից: ԺԲ դիւինց է սկսուած ծրագրեալը: Այստեղ, 626 թուի տակ, պատ-մում է թէ ինչպէս կայսրը զօրք մտն Ոսպարների խաքանից, դրկելով նրա սոս բանակցութեան Անդէ անունով պաշտօնեային: Ոսպարը համա-ձայնեց եւ զօրքով եկաւ կայսեր մօտ:

Արգէն յիշել ենք վերեւ, որ մեր պատմա-գիրը կարծում է սխալմամբ որ խաքանը գնա-ցել է մայրաքաղաք տեանելու կայսեր, արնինչ հանդիպումը տեղի է ունեցել Տփղիսի մօտ: Հերակլ կայսրը թողեց Կ. Պոլիս 628 թուին եւ մնաց պատերազմի դաշտերում մինչեւ 628 թի-ւր՝ Ոսորովի խորտակումն եւ սպանութիւնը: 625ին Հայաստան էր, երբ խոյս տուաւ պար-սիկ զօրավարներից եւ գրեթէ փոխաւ դէպի Ամիդ եւ այնտեղից Սեբաստիա ուր եւ ձեռ-րեց: Պարսնն 626 շարժուեց դէպի Վրաստան, պաշարեց Տփղիսը: Այդ միջոցին հասաւ խա-քանը զօրքով: Թշուփանի եւ Նիկիփոր պատ-րիարքի ասելով, ընդունելութիւնը մեծ էր կայսրը շոյայեց ամէն ուշաբուրթիւն, հանեց թագն իր գլխից եւ դրաւ խաքանի գլխին, սար-քեց մեծ ճաշկերոյթ, եւ ճաշից յետոյ բոլոր ոսկի սպանները նուիրեց խաղաք իշխանին: Եւ ինչ որ անսպասելի էր, կայսրը խոստացաւ տալ իր դուստրը Եւզոկիա քարբարոս հեթանոսին կնութեան՝ փոխան զինակցութեան: Բարբախ-տարար խաքանի մահը փրկեց մատաղահաս իշ-խանուհուն անարգ վիճակից: Երեւում է որ Հերակլ չէր կարող պարծենալ իր զենքի յաջո-ղութեամբ, եւ մինչեւ 626 տարին առաւելու-թիւնը Պարսից կոզմն էր:

Ոսպարը զօրք թողեց Հերակլին եւ ինքր վերադարձաւ: Մեր պատմագրի տեղեկութեամբ խաքանը զօրք դրկեց 627 թուին իր եղորորդու առաջնորդութեամբ, «որոյ ի պատիւ իշխանու-թեան իւրեանց Շաթ անուց կարգային»: Շաթ յատուկ անուն չէ, այլ տիտղոս, ishad կամ al-shad ըստ արբար հեղինակների:

Շաթ մտաւ Աղուանք եւ Ատրպատական, պատգամ դրկեց Ոսորովին, պահանջելով որ

1) Տպագիրն ունի Քրտակարին: Սրբագրե-լի է Քրտարական՝ համաձայն Թէոփանի Kard-eragan :

2) Վրաց Տարեգիրքը (ԲՐՈՍՄէ, Վրաց պատմութիւն Ա. էջ 226) եւ գիտէ անպաճախ տե-սպարն, քէեւ տարբեր գոյնով: Հերակլի հաս-ցեին գոչած են՝ «սօրուէդ այժմի, վիզդ՝ այժմ-եամի»: Խաքանի ինճուէթիւնը մտացուած է եւ Ջերգու հանդէս է գալիս որպէս մի վրացի իշ-խան, զինակցի Հերակլի: Խաքանը կոչուում էր, ըստ Թէոփանի, Ziebel ըստ Սեբեոսի՝ ձեմ-բուլ:

յետ քաշէ իր զօրքերը կայսերական հողերից եւ վերադարձնէ խաչափայտը: Հակառակ զէպօքում, սպառնաց մեծամեծ չարիքներ հասցնել: Խոսքով ծածկելով իր զայրոյթը պատասխանեց, զաւ յայտնելով որ «բեր եղբայր Ձերու խաբան», խախտելով էհն բարեկամութիւնը, խարուել է զբիր ծառայ Հռովմայեցու» խոստումներից: «Տուրկանն դարձաւ յաշխարհ իւր»: Տուրկան յատուկ անուն չէ, այլ դաւառական բառ է եւ նշանակում է պատգամաւոր. (Հմմ. ուղիական):

Պաքանի եւ Խոսրովի այս բանակցութիւնը զրեթէ նոյնն է ինչ որ նախորդ գլխում տեսանք: Խոսրով զրկեց Պաքանի զէմ Ռոճվեհ զօրավարին 1): Պարսից զօրքը մեծ շարք կրեց 627 ղեկտեղբեր 12, որից յետոյ սկսուեցին խլըրտումներ Պարսից արքունիքում: Խոսրով զահրեկէց զդառ ի նպատի իր որդու Կաւատի:

ԺԳ զլուխը տալիս է Խոսրովի սպանութեան մանրամասնութիւնները: Ուշագրութեան արժանի է հեղինակի համախրութիւնը հանդէպ Կաւատի, «որ էր բարխտոյճ, ողորմած առ ամենայն աշխարհս եւ առ ծառայս իւր»: Նա արձակեց բանտից կալանաւորներին: Ազատ արձակեց եւ Վիրոյ կաթողիկոսին, որին նուիրուած է հետեւեալ ժԻ զլուխը:

Վիրոյ կաթողիկոսը, Աղուանից իշխանների սպասամբութեան միջոցին, «փախտեալ անկանէր ի դուռն արքունի» եւ արժանանալով թագուհու հովանաւորութեան, փրկուեց մահից: Բայց մնաց կալանաւոր Պարսից զբան, շարունակելով ստանալ անարգել «զհաս իշխանութեան աթոռոյ»:

Ազատուեց արգելարանից շնորհիւ Կաւատի, ուրբան 628 փետր. 24ից յետոյ, եկաւ հայրենիք, կարոտակէզ «համբուրեց եկեղեցիներէր ղուներն ու յատակները», եւ հազիւ սփոփուած իր երկարատեւ վշտից, նոր աղէտի մէջ ընկաւ: Ձերու խաբանն իր որդու Շաթի հետ նորէն

երեւաց Աղուանք եւ դնաց պայտրեց մի անգամ եւս Տփղիսը: Երկու ամիս նեղելով քաղաքը, վերջապէս տիրացաւ նրան; սպանեց պարսիկ կառավարչին եւ մի վրացի իշխանի, նախապէս հանեց նրանց աչքերը, «փոխանակ զի կոյր նկարեցին զպատկեր նորա»: Անխարկ է վերեւ յիշուած ձաղանքին:

Պաքանը թողեց երկրում իր որդուն եւ ինքը վերադարձաւ: Սա պատգամ զրկեց Պարսից մարզպանին եւ Վիրոյ կաթողիկոսին զալ հնազանդուել իր իշխանութեան: Վիրոյ տատանուած էր, մանաւանդ որ մարզպանը փախել էր Պարսիկաստան, վախենում էր որ Պարսիկները նորէն իրեն պատժեն, եթէ Շաթի կողմն անցնէ: Ժողովուրդը ապաստանեց ամուր տեղերը: Վիրոյ եւս քաշուեց Արցախի լեռները: Դրութիւնը շատ ծանր էր. թշնամու սարսափը եւ միւս կողմէն սովը հարկադրում էր մի հնար գտնել դուրս գալու անորոշ վիճակից: Չարաբերդ ամբողջում խորհուրդ արաւ երկրի մեծամեծների հետ, ուր որոշուեց որ կաթողիկոսը զնայ անձամբ ներկայանալու խազար իշխանին: Շաթի բանակը Պարտաւ քաղաքի մօտ էր: Մեծ նուէրներով Վիրոյ ներկայացաւ նրան, յաղորդ ամուրքել զազգանին եւ ազատել գերիներին (1):

ԺԵ զլուխը կրում է Վիրոյի ինքնաձեռն ստորագրութիւնը, ուր նկարագրում է սովը եւ սոսկալի ժանտախտը:

ԺԶ զլ. պատմում է թէ խաբանը զրկեց իր որդուն, Շաթին, զօրավար Չորպան-Թարխանի առաջնորդութեամբ հաւաքելու հարկե-

(1) Կաթողիկոսին օգնեցին քազցրած գերիներին որանելու խաբանի կողմէն նշանակուած մարդիկ, այս յայտնիս զորս թնդիւնս անուանեն»: Ընդգծած բառս, որքան մեզ յայտնի է, առանց մեկնութեան է: Մեզ բուում է որ խազար բառ է եւ պաշտօնութեան կոչում: Աւարաց խաբանի մէկ ներկայացուցիչը կերտում քաղաքում կոչուում էր toundoun-os, Յուստինիան Բ. օրով 710 քուրքին, ըստ Թէոփանի, էջ 579: Մեզ բուում է որ նայն բառն է ինչ որ հայացրած թնդիւն, փոխանակ ք(ու)նդուսի:

1) Խոնվիհ, Սերեոսի մօտ Խոնվիհան (էջ 94, ոչ Խոն վիհան, էջ 79 ձոռն վիհան, կարդալ Խոնվիհան), Թէոփանի մօտ R a z a r է s որ աղսաղուած է: Խոնվիհ վարքի եւ ձեւն է պարսկերէնի՝ խոզրէհ, որ նշանակում է բաւացի զլաւորեայ», այսինքն բարեբալտ:

ըր որ տալիս էին Աղուանցիք Պարսիկներին: Եւ Շահաբազ մի գունդ զրկեց նրանց ղէմ, բայց անյաջող: Ուազարները յաղթեցին եւ վճռեցին ձեռք ղնել նաեւ Հայոց երկրի վրայ: Այս միջոցին լուր եկաւ խաքանից որ ընտանեկաւ, կորինէր կաշն եւ Եաթիբ պէտք է անմիջապէս վերադառնար: Հետաքրքրական է Եահրվարագի ճառը կամ հրապարակախօսութիւնը, ինչպէս պատմագիրն է արտայայտուած, ուղղուած իր զօրքերին, ուր ակնարկուած է թէ կարող է կորնել «զչառուելոս Սասանականին» եւ ինքը թագաւորէի: Յիշում է պարծանքով որ ինքն էր որ վանեց «զորդին Հոռմելայ», այսինքն կայսեր, եւ այժմ կարող է փչրել հիւսիսականներին: «Եւ զիմք ոչ փրկեաց զոսա զիսցիկն իւրեանց յոր յուսացեալս, էին խաղալի է ձեռին եւ դռուէին (եւ ո՛չ թէ զգուենն)», ինչպէս տպուած է) ի գիրկս, որպէս ժանուկ ընդոնի իւրեանց»:

Նիկիոյի պատրիարքը պատմուած է որ Ջեբու խաքանը կայսեր ներկայացրեց, 626 թուի տեսակցութեան միջոցին, իր որդուն որ շատ մտառակ էր. եւ կայսեր առաւ նրան իր ծնկների վերայ եւ փայտեց: Թուած է թէ մեր պատմագիրը զիտէ այս ղէպը որին ակնարկուած է Եահրվարագի բերանով: Ուաքանի որդին Եաթիբ էր, եւ նրա հասցէին է ուղղուած Եահրվարագի խօսքերը թէ ի՞նչ օգուտ տուաւ կայսեր իր դիեցիկը որին զգուած էր որպէս իր ընդոնի մանուկ:

Մեր պատմագիրը զիտէ որ արքայորդին մանուկ էր, ուստի գրում է՝ «Թողեալ զօրս պատերազմողս ի ձեռս որդուս իւրոյ Եաթիայ հանդերձ դաստիարակօք» (ԺԻ գլ. 1):

Գիտէ նաեւ որ Եահրվարագ թագաւորել է: Կաւտր մեռու 5 ամսից յետոյ (լատ Սեբեոսի՝ 6), ուրեմն թագաւորեց 628 Փետր. 24ից մինչեւ Օգոստոս: Նրա յաջորդ Արտաշիր ըստ Թէոփանի (էջ 504) իլիսեց միայն 7 ամիս, բայց Միքայէլ Ատրի տալիս է նրան մի տարի եւ տասն ամիս 1): Մեր պատմագիրն եւս, թուած է, նոյն տեղեկութիւնն ունի: Արտաշիրից յետոյ Եահրվարագ զբաւեց զահլը, թէեւ երկար չվայելեց

եւ սպանուեց հաղիւ երկու ամիս թագաւորելուց յետոյ:

Եահրվարագի «հրապարակախօսութիւնը» Կաւտրի օրով էր, ուրեմն 628 թ., երբ նա տաւ կաւտր շիր որոճում փոտասիրական ձգտումներ: Պատմագիրը անշուշտ յետին թուով է նրա բերանը ղնում թէ կարող է վերջ տալ Սասանեան տան եւ ինքը թագաւորել:

Այսպէս, քննած դրուագի, այսինքն երկրորդ զրքի թ՝ — ԺԶ զրկիւնների, հիւր միանգամայն պատմական է: Ըստի որ տեղեկութիւնները սակայն ազատ չեն ինչ ինչ թերութիւններից: Կան հակաժամանակեաց կէտեր, կան չիոթութիւններ: Ակնբն է որ հեղինակը օգտուել է վստահելի աղբիւրներից եւ թերութիւնները, թերեւս, վերագրելի են իրեն:

Այն կարծիքն էինք յայտնել որ քուն աղբիւրը համարենք Վիրոյ կաթողիկոսի յիշատակարանն է: Վենետիկի բանասէրը ծառայել է եւ այս ենթադրութեան ղէմ այն հիմամբ որ Վիրոյ չէր կարող իրեն մասին գրել «այր համարեալ է իմատոսն»: Առարկութիւնս պարզամիտ է: Օգտուել չի նշանակում արտաբերել եւ մեր մտքը հեռու էր Վիրոյի գրութեան պատճէն համարել ինչ որ մեզ աւանդուած է Կաղանկատուացին:

Մենք մնում ենք մեր կարծիքին: Վիրոյի մի յիշատակարանը հասել է մեզ Կաղանկատուացու ընդօրինակութեամբ. «Եւ Վիրոյ Աղուանից եւ Լիփսաց եւ Ջողայ կաթողիկոս թողում ասել» եւայն (ԺԵ): Այստեղ Վիրոյ նկարագրուած է սքսկալի սովը եւ ժանտ ցար որպէս հետեւանք պատերազմների: Վերնագրի մէջ յիշուած է եւ «զերութիւն», բայց այս մասին ոչինչ չկայ ընդգրկում: Հաւանորէն յիշատակարանը թերի է: Վիրոյ զլիսաւոր զերակատարն էր խաքանի արչաւանքների միջոցին, անձամբ գնաց նորա մօտ եւ թեթեւացրեց երկրի դրութիւնը: Հնարաւոր է որ նա զրիչ առնէ ձեռը ճառելու սովի եւ հիւանդութեան մասին, առանց իստելու իր ստաթիլութեան վրայ: Խոնչ առթիւ պիտի զբաժ լինէր երեք զօրավարների մասին, ինչպէս ինքն է արտայայտուած — «սովն եւ սուրն եւ մահն», եթէ ոչ Ուազարների արչա-

1) Michel le Syrien, II, p. 410 (Chabit.)

անձների եւ իր կատարած փրկարար դերի: Այս դրուադի մէջ Կաւատ ներկայացրած է համակրելի դժերով, մինչդեռ արինւարբու մէկն էլ նա էր որ սպանեց ոչ միայն Տօրը, այլ եւ բոլոր եղբայրներին, թուով 40: Սակայն Վիրոյի Համար Կաւատ մեծ բարեբար էր, «ոչդրամած», որպէս պատճառ իր աղաւաղութեան: Կաղանկատուացու աղբիւրն այս կէտում Վիրոյի ենթադրեալ գրութիւնն է:

Տեսա՞ք որ մեր պատմագիրը խոստանում է սկսել 625ից, բայց սկսում է 614ից: Մեզ թուած է որ խոստումն արձուած է Վիրոյի յիշատակարանից: Վիրոյի նպատակն է եղել պատմել ինչ որ ինքն է կատարել 628 թուին խաբանի մօտ, եւ բնականօրէն պէտք է տեսել խօսել Խաղարների առաջին արշաւանքի մասին, եւ սկսել ուրեմն 626 թուից:

Իսկ մեր պատմագիրն իր կողմից աւելցրել է Ժ եւ ԺԱ գլուխները որ ծրարից դուրս են: Այսպէս միայն կարելի է մեկնել խոստումի եւ գործի մէջ եղած անհետեւողականութիւնը:

Ա գրքի ԺԼ գլուխը քաղուած է Եղիշէից, բայց մեր պատմագիրն աւելացրել է Վաչէի անունը որ անձանօթ է Եղիշէին եւ Ղաղարին: Երկրորդ գրքի Գ. գլուխը Կորիւնից է, բայց վերջին կտորը՝ Խորենացուց, Հետեւապէս եւ Վիրոյի յիշատակարանից՝ քաղած տեղեկութիւններին կարող էր կցել ուրիշներ:

Չարմանալի պիտի չթուէ որ Վիրոյին չէ յիշում որպէս աղբիւր: Յիշեալ քաղուածներն առթիւ եւս չեն յիշատակուած ո՛չ Եղիշէ եւ ոչ Կորիւն: Ի գրքի ԻԹ գլուխը Իւրաքանչիւ մասին այլ աղբիւր չունի քան Յովէլի նամակը (Լ) նոյն նիւթի վերաբերեալ: Ինքը պատմագիրը՝ ախպէս է պատմում, կարծես անկախ է Յովէլից, սակայն բաւական է հա-

շոտով մս մտքոյ շաղանքոյ լիտորոց ցի մասն այնտեղից է արձուած, միայն դրական համեմն է իրենը: Յովէլի նամակը բրուում է երեք էջ, իսկ պատմագիրը նիւթը ընդարձակել է դրական թարմատարներով մինչեւ կրկնակի ծաւալը: Հաւանօրէն նոյն կերպով է վարուել եւ Վիրոյի յիշատակարանի հետ: Հ. Հացունի նկատում է որ որպէս յիշատակարան՝ շատ երկար է: Անշուշտ: Սակայն մեր առաջ Վիրոյի քննարկը չէ, այլ մի շարագրութիւն՝ հիմնուած Վիրոյի տեղեկութիւնների վերայ:

ԺԵ գլխում որ կրում է Վիրոյի անունը ուշադրաւ է հետեւեալ տեղը. «Այլ օրինակ մերոց փորձութեանցս ոչ կարիմք դատանել, բայց միայն գաւաթն Երուսաղէմի է Վեսպասիանոսէ եւ Ի Տիտոսէ»:

Այս շունչը զգալի է եւ թ զլիի բացաղանչութեան մէջ, «ո՛վ սքանչելի պատմութեանս... որում ո՛չ համեմատ է ո՛չ դարուցն առաջնոց նշանագիրք» եւ այլն, ինչպէս եւ ԺԶ գլխի համամասն համեմատութեան մէջ. «Մի՛թէ առաւել իցին քան զընկղմելն Փարսաւոնի» եւ այլն:

Ուշադրաւ են նաեւ Վիրոյի խօսքերը՝ ուղղուած Չարաբերդի ժողովականներին. «Արք եղարք, դուք ինքնին գիտէք զԽարաւածս մեծամեծս, գաի եւ զգոյզումն անյազ եւ անողորմ սրոյն որ վասն մեղաց մերոց սուսքեցաւ մեզ եւ ընկղմեաց յանկարծակի զանձինս մեր» (ԺԵ գլ.):

Այս խօսքերը յիշեցնում են նախարանի այն տողերը որ զմնջելու վերեւ, եւ դուրջ եւ ազդել են տողերի Նկղնակի վերայ, եթէ իրօք Վիրոյի յիշատակարանիցն են արձուած եւ ո՛չ թէ մեր պատմագրի թեյաղութիւնն է:

Խաղար իշխանին ներկայանալու տեսարանը նկարագրուած է ակնաստեսի գրչով եւ կարծում ենք արտագրուած է Վիրոյի յիշատակարանից: Պատմագիրը փոխել է միայն առաջին դէմքը երրորդի, պահելով պատահաբար սկզբի «տեսար», եթէ միայն սրբագրելու չէ «տեսան»։ Այնուհետեւ ամէն տեղ երրորդ դէմքով է պատմում, ինչպէս՝ «եւ իբրեւ մոճին գնուաց»... «եւ փոխեալ ի նոցանէ»... «նստել նոցա».

(1) Կարծում եմ որ ար նախարանի մէջ նախանգնորի նաշիւր եւ հայ թուականը եւս մեր հեղինակի գիտուն կցուածքն է: Յաջորդ գլուխներում ժամանակն որոշում է խարսկի եւ Արտաշի թագադրութեան տարիներով:

... «Իջուցին զմասս» եւայլն: Մի տեղ կարգադրուած է՝ «զընծայ... բարձեալ է բազկաց մերոց»: Սխալ ընթերցում է եւ անիմաստ: Վերոյ բերել էր ընծաները՝ զարսած «կահա-վարից եւ սայլից» վերայ, երբ մտնում են իշխանի մօտ, ընծաները առան բազուկների վերայ, այսինքն ընդունում են ընծաները եւ միայն կաթողիկոսին ներկայացնում իշխանին: «Քարծեալ է բազկաց վերայ»: Կաղանկատուացու արժեքն հրատարակութիւնը, Պարեզի թէ Մոսկուայի, վրտում է նման սխալ ընթերցումներով:

Մի քանակութիւնն էր Կաղանկատուացին ինչ որ գրուէ Վերոյի գործունէութեան մասին՝ պարտական է Վերոյի ենթադրեալ յեշատակարանին: Այս է պատճառը որ նա չգիտէ թէ հ՞րք եւ ի՞նչ հետագայ պայմանների մէջ մեռաւ Վերոյ: Նրա գրուածական խօսքերը կաթողիկոսի հասցէին յատուկ աղբիւր ունենալու պէտք չունին: Սովորական գովեստ է. «Հանճարեղ իմաստուն, զօրուոր է բանա» թէ՛ Քաղաքների հետ խօսելու համար եւ թէ՛ ռամիկների: «Մանաւանդ է Քարգամուտիեան յեղուին Պարսից վարժեալ ամս քասն եւ հինգ ի դիպահնող առ դրանն Սոսրոզում»: ուղում է ասել որ պարսկերէն լաւ սովորել էր 25 տարի Պարսից արքունիքում մնալով: Այս թիւը քննութեան պէտք ունի, դոնէ մեզ մտահոգութիւն չի ներշնչում: Կասկածելի ենք համարում հասկալի Վերոյ մասնակցած լինել Աղուանից իշխաններին ապստամբական շարժումներին ընդդէմ Սոսրոզով: Թուում է թէ պատմագրի սոսկ ենթադրութիւն է թէ այսնպէս զուտ ընդ ապստամբողոս աշխարհին Աղուանից, մանաւանդ որ ոչինչ չէ յայտնում ապստամբութեան էությունը եւ նպատակի վերաբերեալ:

Վերոյից յետոյ, Կաղանկատուացին յիշում է Ուխտանէս, Եղիազար, Ներսէս, Սիմէոն եւ Միքայէլ: Իսկ զբքի վերջում հարթակտական ցուցակի համաձայն Վերոյից յետոյ մինչեւ Ուխտանէս յարողել են Չաքարիա եւ սպա Յովհանն: Այնտեղ նշանակուած են նաեւ կաթողիկոսութեան տարիները.

Վերոյ 34 տարի

Չաքարիա 17 կամ 15 (1)
 Յովհանն 25
 Ուխտանէս 12
 Եղիազար 6
 Ներսէս 17 1/2
 Սիմէոն 1 1/2
 Միքայէլ 35

Այս թուերը ստուգելու համար հաստատուն կուտան ունինք Սիմէոնի կաթողիկոսութեան տարին: Սորա գումարած ժողովը, որի նպատակն էր «Ձեռնարկ», այսինքն դաւանարանական երաշխիք տալ, գումարուեց Հիշրի 85 թ. = 704 յունուարի 14 — 705 յունուար 2 (Գ. Ը. գլ.): (2) Ժողովը գումարուած է Հունուորէն Սիմէոնի գաւառակութեան տարին, 704 թուին: Այստեղից մեկնելով կը ստանանք նախորդ կաթողիկոսների համար հետեւեալ տարիները մօտուորապէս.

Սիմէոն 704.
 Ներսէս 686 — 704.
 Եղիազար 680 — 686.
 Ուխտանէս 668 — 680.
 Յովհանն 643 — 668.
 Չաքարիա 626 — 643, աւելի հիշք՝ 628 — 643.

Վերոյ 594 — 628:

Վերոյի նախորդն էր Աբաս որ գահակալեց 551 թուին եւ կառայարեց 44 տարի, ուրեմն 551 — 596 (Բ. Դ.):

Կարծես հետեւողական են թիւերը: Սակայն Վերոյի նկատմամբ գոնէ անընդունելի, քանի որ գիտենք որ նա գերութիւնից դարձաւ Կառայար օրով 628 թուին (Յ), եւ կենդանի էր տակաւին 630ին: Հարկաւ, կարելի է ուղղել այս անհարթութիւնը, հաշուելով Վերոյի գահակալութիւնը Աբասից յետոյ՝ 596 մինչեւ 630:

Սակայն ուրիշ գծուարութիւն կայ, Չաքա-

1) Ինչպէս ունի Կիրակոս (էջ 101) որ արտագրում է կաթողիկոսների ցուցակը:

2) Աղքեքի տրուած է եւ հայ թուական 148=699, որ սխալ է եւ յետոյ անկցրած է հարազատ է Հրոտից ամսուամ յիշատակութիւնը = մայիս 704 թ.:

3) Անունած է Բ գիրք ԹԸ գլխից:

Այս հատուկ նշանակում էր Վերոյի քննութեան

րիս կաթողիկոսի մասին ցուցակն ունի հետևե-
նալ տեղեկութիւնք. «Այս յերաշխի սա գմեծ
քաղաքն Պարտաւ, եւ ազօրիւք իւրովք գերծոյց
ի գերութենէ զբազմեմ անձինս: Եւ ձեռնադր-
եաց եպիսկոպոս Սիւնեաց զվարամէս ունն ա-
նուն յանհաւանութեան Հայոց: (1)

Արդ Սիւնեաց եպիսկոպոս Վրթանէս ապ-
րում էր Զ. դարու երկրորդ կէտին, ինչպէս ե-
րևում է Յովհաննէս Գարեղենացի կաթողիկո-
սի թղթից՝ ուղղուած այս եպիսկոպոսին (Գիրք
քզքոց, էջ 78): Յովհաննէս կաթողիկոս մեռաւ
Կ. Պոլլիս 574 թուին: Հետեւաբար Վրթանէս
574ին արդէն եպիսկոպոս էր եւ ուրեմն Զաքա-
րիա Աղուանից կաթողիկոսն եւս պէտք է գահ՛ի
վերայ լինէր այդ ժամանակները, այն ինչ
այստանի է Գարեղենացու մի ուրիշ թղթից, որ
այդ ժամանակ Աղուանից կաթողիկոսն էր Ա.
բաս (Գիրք քզքոց, էջ 81 եւ որտեղից օրինա-
կել է Կաղանկատուացի, Բ գիրք):

Մի ուրիշ անպատճուութիւն: Կաղանկո-
տուացին Բ գրքի Ժ զլիթ մէջ յիշում է քահա-
նայ ոմն անուն Զաքարիա, այր սուրբ որ էր
վանական Պարտաւայ եկեղեցւոյն, հեղ եւ հա՛-
ղարտ, որ եղ գանձչ իւր ի վերայ նոցա եւ
երդմամբ, ազգի ազգի հնարիւք գերծոյց զբա-
ղում անձինս քրիստոնէից ազօթիւք իւրովք եւ
րաշխարտիալ զնոսա, նաեւ զՀրէից եւ զհեթա-
նոսաց: Ուստի յետոյ գովեցաւ գործ նորս եւ
վկայեալ յամենեցուն կարգեցաւ յեպիսկոպո-
սութիւն արձոյտն Ազուանից»:

Անտարակոյս է որ խօսքը նոյն Զաքարիայի
մասին է եւ ցուցակը, տեղեկութիւնը քաղուած
են այստեղից: Սակայն Պարտաւի այս քահանան
գործում էր 624 թուին, ըստ մեր պատմագրի,
եւ գերիները Հերակլի բերած գերիներն էին:

Թէոփան (էջ 475) հաւատացնում է որ Հերակլ՝
Ատրպատականի առաջին արշաւանքից, 623 թը-
ւին, վերաբարձաւ ձմեռելու Աղուանք, բերելով
հետը 50 հազար զերի, որոնց մարդասիրաբար
աղատ արձակեց: Հետեւաբար Զաքարիայի կա-
թողիկոսութիւնը պէտք է աւելի ուշ լինէր,
Վիրոյից յետոյ: Այս զէպքում նա չէր կարող
Վրթանէսի ձեռնադրողը լինել: Պէտք է հրա-
ժարիլ այս տեղեկութիւնից:

Պատմութեան մէջ Զաքարիա եւ Յովհան
քնաւ չեն յիշում եւ Ռիտանէս գահի վերայ
է Կոստանդի 19րդ տարին, 660 թուին, այն
ինչ ցուցակի տուեալների համաձայն միայն
668ին կարող էր գահակալած լինել: Փորձեր
անել հաշտեցնելու հակասական տեղեկութիւն-
ները անօգուտ է:

Հաւանական է որ Վիրոյի վախճանած լինի
630ի վերջերը կամ 631, ամէն պարագային Շա-
թի հեռանալուց քիչ յետոյ, որով եւ կը բա-
ցատրուի որ իր յիշատակարանի մէջ ակնարկ
չկայ 630ից յետոյ կատարուած զէպքերի մա-
սին:

Ինչ վերաբերում է Վիրոյի գերութեան,
25 տարին չարիազանցուած է: Պատմագրի հա-
շուով գերութիւնը տեղի պիտի ունեցած լինի
628—25—603:

Սակայն քաղաքական ընդհանուր կա-
ցութիւնը հիմ չէ տալիս ենթադրելու որեւէ
պատմաբանական շարժում Աղուանքում, ոչ էլ
Հայաստանում: Գիտենք որ Ռոբորով գերեց 611
թուին Յովհան կաթողիկոսին, որ Յունական
Հայաստանի հովիւ էր: Ի նկատ առնելով որ
Աղուանք այդ միջոցին քաղկեդոնական հա-
կումներ ունէին, թերեւս Վիրոյ եւս սուտած
լինի եւ վիճակուած Յովհանի բախտին:

Ն. ԱԳՈՂՏ

1) Առնուած է Բ գրքի ԻԸ զլիթից:

(Շարունակելի)

